

ՆԱԲՈՒԷՆ Գ. ԿՍՅՈՐՈՐԴԻՈՅՆ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ

Ականատես ճարտար գրիչ մը այսպէս կը նկարագրէ այս տխուր հանդէսն :

Ի ժաման յորում կը գրեմ, ամենայն ինչ լմնցած է : Որդին հօրը քովը կը հանգչի . Նարոյէոն Գ. յաւիտեանական քնով Նարոյէոն Գ. քանի մը քայլ հեռու կը քնանայ : Անգղիական ժողովուրդը գը գաղղիականին հետ միացաւ մեծ, անհուն և խոր ցաւոց հանդիսի մը մէջ . յերկրի Զուլուից թշուառաբար մեռնողին յուղարկաւորութիւնն՝ հաւասարեցաւ իր կեանքն յափշտակող ահագին աղետիցն :

Առաւօտեան ութէն 'ի վեր անընդհատ կը մեկնին շոգեկառք 'ի Չէրինկ-Գրոսէ : Ամեն կողմանէ Գաղղիայէն եկած նշանաւոր պոնաբարդեանք տեղ մը կը գիմեն . ոչ միայն նշանաւորը, վասն զի անոնց հետ խառն են և ուսմիկ ժողովուրդ, կրպակաւորք, գործաւորք, որ այս սուղ և դժուարին ճամբորդութիւնն ըրիւր են իրենց պարտք համարածնին կատարելու համար : Հարիւրաւոր և հազարաւոր անձինք են որ պզտիկ տեղոյն մէջ կը թափին, զոր նաբողէոնեան ցեղին անհաւատայի թշուառութիւններն 'ի վաղուց պատմաբանօրէն հոշակաւոր պիտի ընէին :

Հագիւ հասեր էինք, ամեն դիէն սկըսան բաժնել տոմսակներ, մանուշակներ, ասղնէգործ ժապաւէններ, մանուշակագոյն երիզներ, և ամենքնիս ալ կամ այս կամ այն սուգի նշանն ունեցանք : Մարդկեղէն ալէժուփ բազմութիւնն դէպ 'ի ֆէմոէն-Հաուզ կը սկսի շարժիլ : Գեղեցիկ է երկիրը, բոլոր մարգագետիններն զարդարուած ծաղիկներով և թխագոյն կանանչ ծառերով, որ

զայն կը շքեղացընեն : Կ'ելլենք դիւրելանելի բլուր մը, և հասնելով զագաթը, կը նշմարենք կայսերական բնակութեան դուռը : Սևով սքողած չէ, այլ տեսակ մը վարագուրով, — Բարիզէն բերուած, — ինչպէս այն ամեն բանն որ ծառայեց թաղման հանդիսին : Կը մոնենք ցանկեալ պարտիզին մէջ, նկարագեղ, բոլոր հովանիք և ծաղիկք, մեծամեծ և հինաւուրց ծառերով, և այնպիսի գալարով և զօշոտիչ գունով մը, որ, աւանդ, գոգցես մոռցնել կուտան այն ողբերգութիւնն որուն տեսարանն են :

Ծերակուտի անդամք և նուիրակք, պաշտօնեայք և գաւառատեսուչք, բոլոր երկրորդ կայսրութիւնն արգէն բնակութեան առջևն են, — որ չի կրնար զղեակ անուանուիլ, և ոչ տուն . — Աջակողմը լմնալու վրայ է նորածն և խորհրդաւոր բարձրաւանդակ մը բոլորովին սևով ծածկուած . անկից է որթագունհին քիչ մը տարօրինակ կերպով և գրիթէ միջնադարեան սովորութեամբ մը ներկայ պիտի ըլլայ հանդիսական յուղարկաւորութեանն : Քիչ մը աւելի առաջ կ'երթամ և կը գտնեմ զիս գրան դեմաց . ուրիշ քանի մը քայլ ալ և կը մտնեմ նորաշէն մատուռն ուր կը հանգչի երէկ իրիկուընէ իշխանին մարմինն : Փռնկեալ սրտիւ ներս կը մտնեմ, և կը կենամ ուշի ուշով դիտելու զայն, որովհետև այնպիսի բաներ են որ ալ պէտք չէ ելլեն մարդու մտքէն : Տպաւորութիւն աւելի քաղցր և հաճոյական է քան արխուր և ցաւագին : Այն ողորմ երիտասարդին ծաղկանց բոյն մը շիներ են : Ի սպիտակ բրդոյ ծալ 'ի ծալ լաթեր պա-

տերէն կ'իջնեն , բնական արմաւենեղ
լայն տերններով որ կը պճնէին ամեն
կողմ . Ն (N) գիրեր և կայսերական
մեղրները զարդարանքը կ'ամբողջացը-
նէին :

Մէջտեղն դադաղը , պսակաց և ծաղ-
կանց փնջից տակ թաղուած , որոնցմէ
կան նաև պատերուն և աթոռներուն
վրայ . այնչափ որ այն տեղ մտնելէն 'ի
վերանոյշ հոտ կը շնչուի : Չորս ազնուա-
կանք կանգուն ոտքի վրայ կը կենան որ
մարմնայն կը հսկեն , և որոնք առջի ի-
րիկունէն փոփոխակի հսկեցին :

Երէկ իրիկուն , ժամը ութին միջոց-
ները , կոտար քահանան կայսրուհոյն
իմացուց որ իրեն հասած էր իր միակ
որդոյն զիակն . — Երթանք , — շուտ
մը պատասխանեց . բայց չէր կրնար եր-
թալ . սգնեցին իրեն մինչև վերջին սան-
դղին աստիճանն : Հօն , ուզեց և ուժ
տուաւ իրեն անձին . և ինքզինքը թօ-
թուելով զինքը բռնող ազնուագուլթ
ձեռուքներէն , զիմեց մէկ շնչով մինչև
մատուռն , մինչև դադաղն , հօն ընկաւ և
բոլոր գիշերը կեցաւ լալով և աղօթելով :

Փառաւոր կառք մը տասնումէկին
դրան դիմաց կանկ կ'առնու : Կ'իջնեն
անկէ Նաբոլէոն իշխանն , իրեն երկու
որդիքն , և Մատիլդէ իշխանուհին :
Կը մտնեն մատուռն և քիչ մը ժամա-
նակ հօն կ'աղօթեն , քաշուելով յետոյ
'ի դահլիճն , ուր քիչ ատենէն և քանի
մը վայրկենի համար պիտի գայ թա-
գուհին : Եւ հա՛ն յանկարծ գնդին ի-
րար անցում մը , սպայից խլրտումը ,
կ'իմացնեն ակնկալեալ այցելութիւնն :
Սովորական կառք մը , քանի մը սպա-
սեակներով որ ձիաւոր անոր ետեւէն
կ'երթան և անպակասելի շոն Պրաուն
կառքին առջևն , կը բերէ հասակն ա-
ռած տիկին մը , սևեր հագած , և ձեռ-
քը գեղեցիկ սպիտակ վարդ մը : Ան-
դղիոյ թագուհին է : Կ'երթայ իր ար-
տասուքը խառնելու կայսրուհոյն ար-

տասուացն հետ , և իր հետ անոր վրայ
խօսելու որուն համար , — առ նա
դրկած չիջանակի մը մէջ , — ըսաւ .
« Not lost, but gone before » (Ոչ կո-
րուեալ , այլ յառաջ դնացեալ) : Եր-
բոր ասկէ կէս ժամ վերջն այն ճամբէն
անցնինք , պիտի տեսնենք զինքն այն
խորհրդաւոր բարձրաւանգակին վրայ ,
քօղի մը ներքև , իր դատերն և չքաղիւր
տիկնանց հետ , տեսիլ մեծերեկոյթ և
թատերական :

Կը կարգադրուի հանդիսաւոր ուղէ-
գնացութիւնը : Թնդանթ մը կը տանի
զգագաղն : իշխանին ծեր ձին , որ աս-
պատանին մէջ իր դարձին կը սպա-
սէր , կը յառաջէ երկայն' սև թափան-
ցիկ և ոսկեգոյն մեղուներով ծածկուած
քօղով մը : Չայն կը բռնէ ձեռքով այն
գինուորն որ խիտ և բարձր խոտերուն
մէջ դիակը գտաւ : Եւ այս զինուորին
վրայ կը յենու այն Ուլմանը՝ Ռայխսհո-
ֆրնի զրահաւոր հեծեալն , իշխանին
սենեկապանն , որ լսելով իշխանին խոր-
հուրդը « ցուցնելու որ Նաբոլէոնի ա-
րիւն իր երակաց մէջ կայ » — Բար-
ձրապատիւ տէր , — ըսաւ անոր — և
քէ պարտերազմի երբանք , զքեզ կը
ձանձաւաւ , աւելի պիտի չդառնաւ . —
Սղիտաւոր կանխասացութիւն , զոր ե-
րիտասարդին համարձակ և ինքնազուխ
կերպն իրեն գուշակել կու տային :

Կ'ելլայ դադաղը : Կը դնեն կառքը ,
և անոր վրայ այն պսակներէն լեռ մը :
Սլ կողմանէ դադաղին ծոպերն բռնած
են կալլէսի իշխանն , Էտիմպուրկի
դուքսն , Գոնոզի դուքսն . ձախ կողմա-
նէ Նաբոլէոն իշխանն , Դուեստի թագա-
ժառանգ իշխանն և Քէմպրիճի դուքսն :
Նաբոլէոն իշխանը միայն քաղաքացի
զգեստով է . կալլէսի իշխանն , 'ի շուք
վախճանեալ իշխանին , կը կրէ ումբա-
ձիգ զօրաց տեղակալի նշանազգեստն .
մինչդեռ Քէմպրիճի դուքսն հագուած է
մարալախտի նշանազգեստն :

Դագաղին առջևէն և ետևէն գնացող զորքերն են գունդ մը հեծեալ նիզակաւոր զորաց , և ամենաչքեղ թեթևազէն վիշապագնդի գումարտակ մը : Ասոնց ետևէն ձիաւոր զինուորական երաժշտութիւնն , ապա վուլչի վարժարանին զինուորեալ ազատորդիք , — երբեմն ընկերակիցք իշխանին , — դէպ 'ի վար դարձուցած հրացաններով , և նոր փառաւոր ոսկեզագաթն սև սաղաւարտով մը :

Վայրկեանէ վայրկեան թնդանօթն հնչեցուց իրեն բոմբիւնը , մինչև հանդիսին վերջին բուպէն : Հազիւ թէ կաքը խլրտեցաւ , խանգարեցաւ ամենայն կարգ , և հեղեղի պէս ետևէն խուժեց ամբոխն : Այսպէս ելանք 'ի Քէմոնէ-Հաուզէ և դէպ 'ի Ս . Մէրի սկսանք երթալ : Ճամբան մէկ մը կը խոտորի և ապա ուղիղ կ'երթայ : Երկու կողմանէ քաղաքի պահապան զինուորաց խիտ կարգեր , որոնց ետևն ութսուն կամ հարիւր հազար մարդ , ամենայն զաւառներէ եկած անդղիական ժողովուրդ , հետիոտս , ամեն տեսակ կառքով , ձիով : Կ'իջնենք , մարդկեղէն գետ շարժական , երկու անշարժ մարդկեղէն գետերու մէջ : Գրեթէ բոլոր Անգղիացիք սուգի մէջ են , կամ սուգի նշան մը կը կրեն :

Ձիգըհըբուզի Ս . Մէրին գոթացի փոքր եկեղեցի մ'է , ծառոց անտառի մը մէջ կորսուած , և բոլոր չորս կողմը ծաղկազարդ : Դիմացը կայ պզտի գեղեցկազարդ գերեզմաննոց մը , ուր ամեն շիրիմ մանրանկար գեղեցիկ պարտէզ մ'է : Այն տեղ ժողովեցանք , վասն զի եկեղեցին երկու հարիւրէն աւելի մարդ չէր առներ : Ահա ինչպէս յինուած է Ս . Մէրի . ներս կը մոցուի գոթացի փոքր դռնէ մը , և 'ի հանդիպող կայ ամենապարզ խորան մը . բոլոր նստարաններով լեցուն է . կայսեր , կայսրուհոյն , կայսրորդոյն աղօթարանները

սևով ծածկուած դատարկ են . առաջին կարգին մէջ ընտանիքն , անոնց ետևը պաշտօնեայք և մտերիմք : Զախակողմը կայ մատուռն , որ աւելցուեցաւ կայսեր մեռնելէն ետքը : Մէկ կողմէն կարմիր կրանիտ քարէ անպաճոյճ տապանն , պարզև Վիկտորիա թագուհոյն , Նարայէոն Գ . պարզ գրուածքով միւս կողմանէ . . . մինչև երէկ բան մը չկար , հիմայ կայ առժամանակեայ շինած իշխանին տապանը : Մէջտեղը խորանն որ զանոնք կը միացընէ . . .

Երբոր շատ մը հրացանից արձակումն իմացուցին մեզի որ յուղարկաւորութիւնը լմացաւ , մտանք ներս տալու վերջին հարկ մը վախճանած իշխանին : Եւ այն ատեն բազմաթիւ նուիրակութիւններն և քաղաքաց գրօշներն և գաղղիական ընկերութիւններն դուրս ելան : Պոնաբարդեանները կը հաստատեն որ ամենայն զաւառ ներկայացուած էր : Կը տեսնեմ պսակներն՝ Պորտոյի՝ , Դուլուզի , Բարիգու երիտասարդաց « de la jeunesse de Paris » , Պոնաբարդ վարժարանին « Collège Bonaparte » , զոր հիմայ Հասարակապետութիւնը Ֆրնդան կ'անուանէ , մեծագոյն մը Աւ Կայսրորդիկ Գորսիքս (Au Prince impérial la Corse) խօսքերով , ուրիշ մը այսպէս Գաղղիա ողբայ գրեզ (La France vous regrette) , և վերջապէս չքեղներու և անշուքներու բազմութիւն մը , — մէկ մը կայ որ արժեք 3000 Ֆրանգ , — որ ամենքն ալ բարեպաշտութեամբ դագաղին վրայ դրուեցան :

Եւ յետոյ խուռն ամբոխը նոյն ճամբով կը դառնայ , վերջին աչք մը կու տայ Քէմոնէ-Հաուզի , և կը թափի բազում առուակներով ուսկից որ եկեր էր : Կը կնքեմ նամակս ինչպէս որ սկսայ . ամենայն ինչ լմացաւ . . . կը մնայ մայր մը որ իր որդին կու լայ , կը մնայ անհուն յաւոց սրտաճմլիկ զգացում մը բովան .

դակ Անգղիոյ և բոլոր քաղաքականա-
ցեալ աշխարհիս մէջ :

Մեռաւ Եւգինէոս Նաբոլէոն իշխանն :
Երկու երեք ամիս անցաւ հիմայ —
և աշխարհք , որ երկու երեք ամսուան
մէջ այնչափ կենդանի մարդ կը թաղէ , և
այնչափ վախճանածներ կը մոռնայ ,
դեռ կարծես հօն կեցեր է բազուկները
խաչածն և զուխը դէպ 'ի վար խո-
նարհած այն դիակը դիտելու :

Ինչու :

Վասն զի այն մեռնողը սոսկալի ա-
նուն մը կը կրէր , որ զինքն սպաննեց :
Վասն զի իրեն մահը՝ մոռացողաց և
ապաշտորհաց յիշեցուց որ ինքն ապրեր
էր :

Եղկելի երիտասարդ :

Միայն 23 տարեկան էր , և փորձեր
էր կենաց ամենէն աւելի դժնդակա-
գոյն դառնութիւններն , ամենէն աւելի
անմիտիթար յուսոյ պատրանքն — քա-
ղաքական ատելութեան անգութ , ա-
պառուժ չարախօսութիւններն . . . :

Եղկելի երիտասարդ :

Թնդանօթից բոմբիւններու , մեծ Պե
տութեան մը զանդակաց ձայներու ,
պայծառափայլ Արքունեաց մը չքզու-
թեան մէջ ծնած , բոլոր Եւրոպայի մե-
ծայարդ բարեմաղթութիւններէն ող-
ջունեալ , կայսերական որորանին մէջ
թագաւորներէ և ժողովուրդներէ մե-
ծարեալ — իրեն մանկական քունին ա-
տեն փառաւոր և յաղթական Արժույ մը
լայն թևերէն պաշտպանուած — նա-
խանձելի բոլոր աշխարհի տղայոց մէջ
իբրև ամենէն աւելի երջանիկն — Կայ-
սրութեան նախասահմանուած — մե-
ռաւ 23 տարուան , մինակուկ , ամեն-
քէն թողուած , խոպան տեղ մը ան-
գթաբար բարբարոսներէն զարնուած ,
որոնք զինքը չէին ճանչնար և չէին ա-
տեր , — հօն ձգուած , մերկ դիակ ,
ճամբուն վրայ — սպաննուած , գործոյ

մը մէջ որ պատերազմ չի կրնար ըսուիլ ,
Նշանադգեստի մը տակ որ իրեն երկրի-
նը չէր — միայն այս բանիս մէջ բախ-
տաւոր որ երեսէն և կուրծքէն վիրա-
ւորուեցաւ :

Եղկելի երիտասարդ . մինչև այս բա-
նիս հասած՝ որ իր ապագային հորիզո-
նին վրայ ամենէն աւելի լաւագոյն տե-
սած բանն՝ շուտ մեռնելուն արկածն
էր , առանց ինչպէսն ընտրելու կարո-
ղութիւնն ունենալու :

Եւ մահուան կը փափագէր ինքն —
թերևս աղաչելով կը կանչէր զայն յօգ-
նութիւն — ապահովագէտ յառաջա-
գոյն կը զգար զայն — և այս յառաջա-
ծանօթութեանը մէջ հանգիստը կը
փնտռէր :

Իրեն սրտին մէջ ոչ մեծ կիրք մը և
ոչ մեծ յոյս մը ունէր , իրեն գլխոյն մէջ
մեծ գաղափար մը չունէր , — որ տային
իրեն հարկաւոր ոյժն էութեան ծանր
քարն ետևէն քաշելու կամ յառաջ մղե-
լու , կամ իրեն ցուցնէին խաւարին ան-
ծանօթին մէջ հեռաւոր ճրագիկ մը , առ
որ ընթանայ իբրև եզր՝ սահման :

Հոգնած էր — հոգնած ուրիշներու
կրքերէն , ուրիշներուն փառասիրու-
թիւններէն , ուրիշներուն ատելութիւն-
ներէն որ իրենց պարին մէջ զինքը կը
դարձնէին , առանց իրեն անոնց մասնա-
կից ըլլալու և զստոնք փոխանակելու :

Հոգնած էր իր անուան սարսափելի
պատասխանատուութենէն՝ որ զինքը
կ'արգելուր անձանօթ մը ըլլալու ապա-
հով խաղաղութենէն , որ զինքը կ'ար-
գելուր երիտասարդ մը ըլլալու բնական
հաճութենէն :

Հոգնած էր կուսակցութեան մը ա-
նուանական զուխն ըլլալու , որ կը բան-
տարկէր զինքն իր մեծարանքներովն —
և որուն համար ուրիշ բան չէր բայց
անցելոյն պատանդ մը , ապագային զը-
բաւական մը :

Այս դրից տոկալու հանդուրժելու

համար, պէտք էր ըլլալ կամ հանճար մը կամ տգէտ մը — կամ հանճար մը զայն նուաճելու — կամ տգէտ մը կրելու առանց չափելու զայն — և ինքն ոչ մէկն էր և ոչ մէկանն :

Միայն զայն ըմբռնելու չափ միտք ունէր, և ոչ իր հանճարովն կերպաւորելու զայն :

Առանձնական մարդ մ'էր — և առանձնականին պատասխանատուութիւններն և ազատութիւնները չունէր, — իշխան մ'էր և իշխանութեան և ոչ այն բանն ունէր որ զայն տանելի կ'ընէ — զիշխանութիւնն :

Իշխանութեան հետամուտ մ'էր... ծննդեան պարտուցն համար — և բոլոր իշխանութեան հետամուտ եղողներէն ամենէն թշուառագոյնն — վասն զի իրեն համար բան մը չէր պահանջեր, և ամենայն ինչ պէտք էր ուրիշին համար պահանջել :

Այս իրեն վիճակին ամեն ցաւերն ունէր — ւիքսորէն սկսեալ — ոչ մէկ մխիթարութիւն մը, և ոչ իսկ առերևոյթ յուսոյ :

Աղէկ ըրաւ մեռնին — ինչպէս իր հօրն հօրեղբորորդին՝ Ա. Նաբոլէոնին որդին — ծնեալ թագաւոր Հռովմայ, մեռեալ դուքս Ռէխչատի : — Անկէ աւելի երջանիկ, մեռաւ Զուլուներէն սպաննուելով, — մինչդեռ մէկալը դատարկութենէ մաշուելով մեռաւ :

Պատմութեան սահմանուած, անոր մէջ ուրիշ բան չթողուց բայց երկու թուական — իրեն ծննդեանն և իրեն մահուանն : Ճակատագիր էր որ իր առաջին ճիշն և յետին հառաչանքն հասարակապէս պիտի լիցունէին զաշխարհ անոնցմով, և իրմով :

ՉԱՆԱԶԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Գաղթականութիւն Հայոց 'ի Զաւա. — Ազգային թղթակից մը 'ի Զաւայե, Պ. Գէորգ Գասպարեան հետեւեալ տեղեկութիւնը կու տայ այն տեղի Հայոց գաղթականութեան վրայ :

Ի սկիզբն ութնասներորդ դարուն, սկսան Հայք գաղթիլ 'ի կղզին Զաւա, յուսով զամաղիտն գոլոյ առաւելագունի յառաջադիմութեան տուրևառիկ շահավաճառութեամբ. և արդարև յոլովք յալողեցան բնատուր ճարտարութեամբ իւրեանց և բնական՝ ձըրիւք ըստ սովորականին՝ առնել հսկայաբայլ և արժանագով յառաջադիմութիւն, զուզընթաց գրեթէ ընդ Եւրոպացի զբացեաց նկրտելով յասպարիդի շահավաճառութեան : Ըստ ծանօթութեան ժամանելոյ 'ի ստոյգ աղբերաց 'ի տեղեկութիւն գրչիս, շահ վաճառա-

կանութեան նոցա յայնժամ յաճախ հաւասար էր ընդ զրամագլխոյն, որով մարթացան 'ի սակաւ ժամանակի կուտել զմեծագանձ ճոխութիւնս : Ի գաղութս աստ ակնաւոր եղեն հետզհետէ հայրենասիրական պերճ հանդիսիւք և ազգասիրական ջանիւք, նա մանաւանդ մեծարոյք յաշտ տեղական Պետութեան, Աղա Գէորգ Մանուկ Մանիչարեանց, Աղա Յովսէփ Ամիրեան, Աղա Յակոբ Յարութիւն, Պարոն Մարգար Ս. Շէհրիմանեան, երեքին եղբարք Պօղոս, Բարսեղ և Կարապետ Անդրէասեանք, երջանկայիշատակ երկրորին հարազատ քորք Տիկին Մարիամ Յակոբ Յարութիւնեան, և օրիորդ Թագուհի Մանուկեան, որոց աստուածահանոյն գովանի առատաձեռնութեանն շնորհք, և ազգասիրութեան պերճ և